ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՄԱՍԻՆ

Հոդված 54. Կենտրոնական բանկի առաջնահերթության իրավունքը

Հոդված 55. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկն ազատվում է հարկերից և տուրքերից: Սույն հոդվածով սահմանված արտոնությունը չի տարածվում Եվրասիական տնտեսական միության անդամ համարվող պետություններից ապրանքների ներմուծման համար հարկային մարմիններին վճարման ենթակա հարկերի, իսկ Եվրասիական տնտեսական միության անդամ չհամարվող պետություններից ապրանքների ներմուծման համար՝ մաքսային մարմիններին վճարման ենթակա հարկերի, մաքսատուրքերի և մաքսավճարների վրա~~ապրանքների ներմուծման համար մաքսային սահմանին վճարման ենթակա հարկերի, մաքսատուրքերի և մաքսավճարների վրա~~: Անկախ սույն հոդվածի երկրորդ նախադասության դրույթներից՝ Կենտրոնական բանկը ազատվում է հարկերից, տուրքերից, մաքսատուրքերից և մաքսավճարներից թղթադրամների, մետաղադրամների (այդ թվում՝ հուշադրամների), ինչպես նաև բանկային ոսկու և արժութային արժեքների ներմուծման դեպքում՝ անկախ ներմուծման պահին ներմուծվող թղթադրամը կամ մետաղադրամը (այդ թվում՝ հուշադրամը) Հայաստանի Հանրապետության տարածքում շրջանառության մեջ դրված լինելու հանգամանքից:

Հոդված 60. Սույն օրենքի 55-րդ հոդվածի դրույթներին վերաբերող ~~հրահանգները, ինչպես նաև դրանց վերաբերյալ~~ պարզաբանումները հաստատում են Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայությունը և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր մաքսային պետական կոմիտեն՝ համաձայնեցնելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի հետ: